

**ՎԻՃԱՐԿՈՒՄՆԵՐ, ՆՇՈՒՄՆԵՐ,  
ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ  
DISCUSSIONS, NOTES  
ET COMMUNICATIONS**



**ԻՆՉՈՐ ՍՈՒՐԲ ՂԱԶԱՐԸ ԴԱՐՁԱԿ  
ՄԽԻԹԱՐ ՍԵԲԱՍՏԱՑՈՒ ՎԵՐՁԻՆ ՀԱՆԳՐՈՒԱՆԸ  
ՀԱՅՈՒԹԵԱՆ ՄՇՅՆՁԵՆԱԿԱՆ  
ՈՒԽՏԱՏԵՂԻՆ**

Երբ վերակառուցման յեղափոխիչ լոյսը՝ ներթափանցի նաեւ հայոց գիտութեան ու մշակոյթին, հին ու նոր բոլոր ծալքերը, անտարակոյս, անարդար մոռացումից վեր կը խոյանան սրբացման արժանի դէմքեր, յիշատակներ, կը վերագնահատուեն ծանր երկունքի հոգեւոր եւ իմացական բոլոր արժէքները: Այս դէպօւմ, ահա, հարկ կը լինի աստիճանաբար վերանայել ու լրացնել հայ ժողովրդի պատմութեան, գրականութեան ու արտեստի առանձին հրատարակութիւններ՝ ակադեմական բազմահատորեակներ, գիտական բնագրերի ժողովածուներ, մենագրական ուսումնասիրութիւններ, դասագրքեր: Հարկ կը լինի նոր հայեաց նետել նաեւ հայոց գաղթավայրերի պատմութեանը, որին բարյոյական պարուք ունի հայագիտութեան արդի եւ ապագայ մշակներից իւրաքանչիւրը, ովքեր կոչուած են տեսնելու անցեալի ժառանգութեան գնահատութեան հարցում եղած սիսանները, շրջանցումները, ծայրայեղութիւնները, որոշել նրանց չափերն ու սահմանները եւ բացել ճշմարտութեան վարագոյրը՝ ազգային ինքնաճանաչման նշանաբանութիւն:

Անտարակոյս, գնահատելի է այն փաստը, որ վերջին տասնամեակներում ստեղծուել են բազմաթիւ աշխատութիւններ հայ եւ այլ ժողովրդների պատմա-քաղաքական, առեւտրա-տնտեսական, գրական-մշակութային եւ այլ կապերի ու փոխյարաբերութիւնների վերաբերեալ: Բաւական է յիշել, որ «Հայ ժողովրդի պատմութեան» միայն չորրորդ հատորում (տպ. 1976 թ.) «Հայկական գաղթավայրեր 12-18րդ դարերում» խորագործ տակ, առանձին բաժիններով ներկայացւում է՝ Պոլսոյ, Զմիւռնիայի, Սիրիայի, Եգիպտոսի, նոր Ջուղայի, Հնդկաստանի, Ղրիմի, Ռուսականայի, Լեհաստանի, Բուլղարիայի, Հունգարիայի, Մոլդավիայի եւ այլ հայ գաղթավայրերի պատմութիւնը: Բնականաբար առաւել հանդամանալից ներկայացւում են Աստրախանի, Հարաւային Ռուսաստանի, Մոսկովյայի, Պետերբուրգի հայ գաղութ-

ների կեանքն ու գործունէութիւնը: Նոյն սկզբունքով մեծ ու փոքր գաղթավայրերի նոր ժամանակների համակողմանի պատմութիւնն է շարադրւում նաեւ «Հայ ժողովրդի պատմութեան» հինգերորդ, վեցերորդ եւ եօթներորդ հատորներում: Դարձեալ իրեւ նուաճում պէտք է յիշել նաեւ, որ ստեղծուել են Հնդկաստանում (Մադրաս, Կալկաթա)՝ Շահամիրեաններին, Խուսաստանում (Պետքրուրդ, Մուկուայ)՝ Լազարեաններին, Վրաստանում (Թիֆլիս)՝ Յովհանքաներին նուիրուած գիտական առանձին ուսումնասիրութիւններ եւ այլն:

Սակայն, ցաւօք նման աշխատութիւններ չեն ստեղծուել ամենահին եւ ամենահարուստ հայ գաղթավայրից մէկի՝ Խտալիայի մասին: «Հայ ժողովրդի պատմութեան» բազմահատորեակի վերեւում ներկայացուած լայն ծրագրերից դուրս են մնացել իտալահայ, վենետիկահայ գաղութները, Վենետիկի Միխիթարեան Միհաբանութեան դարագլխային ամբողջական պատմութիւնը, նրա ղեկավարած դպրոցական կրթական շարժումը սփիւռքում, նրա բաղադրիչ մասը կազմող Վենետիկի Միխիթարեան Միհաբանութեան կեանքն ու գործը՝ անհրաժեշտ չափով... Աւելին: Մայր Հայրենիքի ընթերցողը շուրջ 70 տարուայ իր պետական կեանքի պատմութեան մէջ չունեցաւ իտալահայ գաղթավայրի, իտալական հիւրցնկալ ժողովրդի ծոցում հաստատուած «մշտնշենաւոր» ակադեմական, գիտական-կրթական աշխարհաճանաչ Ս. Ղազարի դպրոցի, նրա հիմնադիր եւ առաջնորդ՝ «Նոր առաքեալ», «Երկրորդ Մաշտոց» «Նոր Լուսաւորիչ», «Հանճարեղ Միխիթար» Սեբաստացու մասին գէթ մի փոքրիկ, հանրամատչելի գրքոյկ, թող թէ գիտական բազմաբնոյթ հետազոտութիւնների շարքեր: Առաւել զարմանալին այն է, որ 18-20րդ դարերի հայ, ոուս, եւրոպացի նշանաւոր բազմաթիւ գործիչներ իրենց համապատասխան աշխատութիւններով, առանձին գրքերով, յօդուածներով, նամակներով, բանաստեղծութիւններով, հիացական գնահատականներով եւ ընդհանրացումներով իսկ չօգնեցին մեզ սթափուելու, ճանաչելու իտալահայ գաղութը, նրա ծոցում սնունդ առած ու բարգաւաճած Միխիթարեան Միհաբանութեան եռադարեան կեանքի պատմութիւնը, խոնարհուելու բազմատանջ հայի, լուսանորոգն Միխիթար Սեբաստացու մեծ վաստակի առջեւ, ինչ-ինչ եղանակներով յաւերժացնելու նրա եւ նրա արժանաւոր յաշորդների յիշատակները: Այս բոլորը, անշուշտ, վրիհպումներ չեն, այլ հիւանդագին, անհիմն զգուշաւորութեան տիուր հետեւանքներ...: Բայց, փառք նախախնամութեանը, մտաւոր ճանաչման անթափանց վարագոյրը փոքր-ինչ շարժուեց եւ 1976 թուականին, Միխիթար Սեբաստացու ծննդեան եռադարեան տարեղարձին, տարեղարձ, որ փառահեղորին նշուեց Վենետիկի Դոժերի հոչակաւոր պայլատում եւ սփիւռքում, Մաշտոցեան Մատենադարանում (ներքին գերագոյն ջանքերի գնով) տեղի ունեցաւ մի համեստ, «Անաղմուկ» գիտաժողով... ցաւօք երբ

ինդիր եղաւ թոյլատրելու, որ այդ օրը Լուսինէ Զաքարեանի կատար-մամբ հնչի Միկրար Սեբաստացու «Օրօրը» (որը միշտ կատարում է Վենետիկի Սուրբ Մարկոսի երգչախումբը եւ կատարում են այլք՝ ամէնուր)՝ պատասխան եղաւ, թէ՝ շտա էք առաջ անցնում...:

«Ազգ մը, - գրում է մեծանուն գիտնական Արշակ Զօպանեանը, - որ Միկրարի պէս նկարագիր մը ունի, իրաւունք չունի ինքնիրմէ յուսահատելու...: Միկրարի կեանքը մին է մարդկութիւնը պատուաղ այն հոյակապ դիւցազներգութիւններէն, ուր կը տեսնենք մարդ մը, որ միամինակ, իր հոգեկան կորովէն ուրիշ որեւէ միջոց եւ զենք չունենալով, ընկերական, ժաղաքական, բնական բոլոր ոյժերուն ընդդիմադրութիւնը կը նուանէ եւ կը յաջողի ոչնչից աշխարհ մը ստեղծել»:

\*

\* \* \*

**Արեւմտեան Եւրոպայում հտակիան էր այն երկիրը ուր, միջին դարերից ի վեր, առաւել շատ ներթափանցեցին հայ ժողովրդի տարագիր չերտեր եւ նշանակալից գեր կատարեցին նրա տնտեսական ու մտարարական կեանքում:**

Այստեղ նկատենք նաև, որ Արեւմտեան եկեղեցու զեկավար ներկայացուցիչներից շատերը կրօնական տեսակէտներով էին ստանձնել վտարանդի հայութեան հովանաւորի դերը. սակայն հայ աշխարհական ու եկեղեցական դասերի հեռատես ներկայացուցիչները, հաշուի առնելով այդ տեսակէտները, խոհեմաքար օգտուում էին Եւրոպացի լուսամիտ հիւրնկալների հովանաւորութիւնից եւ գործում էին հայրենիքից հեռու՝ նրա յարատեւութեան ու առաջադիմութեան նշանաբանով:

Իտալական վերածննդի շրջանում, երբ Հայաստանը հիւծուում էր մոնղոլական քարբարոսական ցեղերի արշաւանքներից, Հոռմէչական կայսրութեան եւ Վենետիկեան հասարակապետութեան դեռեւս շարունակական ծաղկման շրջանում, երբ տեղի ունեցաւ Ռուբինեան հայկական պետականութեան անկումը եւ աւելի ուշ՝ Շահ-Արքասի պարտադրած արտագաղթը, հայրենիքից բնաւեր դարձած, հողմածեծ հայութեան առանձին զանգուածներ աստիճանաբար հաստատում էին նաևս իտալական քաղաքներում՝ Հռոմում, Ֆլորենցիայում, Միլանում, Ջենովայում, Նեապոլսում, Պիզայում, Պալուայում, Վերոնայում եւ այլուր: 12-13րդ դարերում իտալական շուրջ 40 քաղաքներում ապրում էին հայեր: Դեռեւս 6-7րդ դարերում բիւզանդական զօրամարտերում եղել են հայազգի հրամանատարներ (Ներսէս Պատրիկ (555-575), Խսահակ Հայկազն (625-645). այդ դարերում Ռիվեննա քաղաքի հայազօրի զբաղեցրած շրջանը կոչուել է «Արմենիա»)...:

Սակայն աւանդութիւնը, ըստ երեւոյթին, ինչ-ինչ չափով ներգործում է պատմութեան զարգացման ընթացքի վրայ...: «Եթէ Հռոմը ստեղծին մարդիկ, ապա Վենետիկն ստեղծեց Աստուած», - ասում են հնուց ի վեր: Եւ ահա, այս աստուածաստեղծ Վենետիկին էր վիճակուած առաւել մեծ դեր կատարելու հայ-իտալական յարաբերութիւնների միջին եւ նոր դարերի պատմութեան մէջ: 12-13 դարերից ի վեր, յատկապէս 16-19րդ դարերում, հայերն այստեղ բացառիկ կշռունիչն: Լինելով աշխարհի ծովային վաճառաշահութեան հօր կենտրոններից մէկը, Վենետիկն իր շուրջն է համախմբում Հայաստանի եւ հայշատ պարսկական, թրքական քաղաքների տարագիր վաճառականների ու արհեստաւորների առանձին խմբեր եւ դառնում հայ վաճառականութեան մի առանձնաշնորհ գալթավայր:

Հայ ժողովրդի տնտեսական, իրաւա-քաղաքական ընդհանուր կացութիւնը եւ մասնաւորապէս վենետիկահայոց իրաւա-տնտեսական կեանքը ծնում են հայ-վենետիկեան գրական, գիտական ու կրթական բազմաթիւ նշանակալից երեւոյթներ: Խտալական հողի վրայ գործում են հարիւրաւոր հայ մտաւորականներ՝ պետական, զինուորական ծառայողներ, վաճառականներ, որոնցից շատերը հայ եւ ընդհանուր հասարակական մտքի ու մշակոյթի պատմութեան մէջ թողել են անջնջելի հետք: Ցունական կայսերական զօրքերի հոչակաւոր զօրավար Ներսէս Պատրիկի (6րդ դար) անուան հետ է կապւում Վենետիկում հայկական առաջին եկեղեցու եւ գրատան ստեղծումը, նշանաւոր ճանապարհորդներ, Մարտիրոս Երզնկացին (1491-1497), Սիմէոն Լեհացին (1611-1617) շրջում են Եւրոպայում եւ կարեւոր տեղեկութիւններ հաղորդում նաեւ Վենետիկի մասին: Ցակոր Մեղապարտը 1512 թուականին Վենետիկում հիմնադրում է հայկական առաջին տպարանը, հրապարակ հանում հայերէն առաջին տպագիր գիրքը, հայերէն աշխարհիկ բանաստեղծութեան առաջին տպագիր նմոյշները:

16-17րդ դարերում Վենետիկի առեւտրական խոշոր գործարքների մէջ ընդգրկում են աւելի քան 2000 հայեր: Այստեղ ստեղծում են հայոց խոչոր վաճառատներ (վաճառասեղաններ՝ Ս. Մարկոսի շրջակայրում): Հայերի համար ընդունուում է յատուկ սահմանադրութիւն: Վենետիկում ստեղծուում են հայկական առանձին գրատուն, հիւրատուն՝ պանդուխտ եւ աղքատ համար եւ այլն:

Հայ-իտալական յարաբերութիւնների պատմութեան մէջ մասնագիտական ուսումնասիրութեան առատ նիւթ են տալիս յատկապէս Վենետիկում հայոց հետ կապւած ճարտարապետական յուշարձանները, գերեզմանոցները, տապանաքարերը, դիմաքանդակները եւ այլ շինութիւններ: Քաղաքի բուն կենտրոնում է եղել հայկական Ս. Թէոդորոս եկեղեցին, որը յետագայում քանդուել է Ս. Մարկոսի տաճարի եւ դքսերի պալատի կառուցման պատճառով: Հայկական այդ եկե-

ղեցու տեղում այժմ խոյանում է մի վիթխարի յուշասիւն՝ աստիճանաւոր լայն վանդակով, որը խորհրդանշում է Ս. Թէոդորոս զօրավարի պղնձեայ արձանը:

Ճարտարապետական մի հին ու հետաքրքիր կառոյց է Վենետիկի հայոց Ս. Խաչ վանքը (այժմ Միկրոստաբեան): Այն գտնուում է քաղաքի ցամաքային մասի կենտրոնում, Ս. Մարկոսից դէպի ձախ՝ խաչաձեւ փողոցներով, շրջանցքներով, կամուրջներով: Այդ տարածքը ամբողջութեամբ անցեալում կոչուել է «Հայոց կղզի»: Ս. Խաչը, կառուցուել է 1203 թուականին եւ այդ շրջանից անընդմէջ գործում է մինչեւ այսօր: Տասնամեւակներ շարունակ այս վանքի առաջնորդն է եղել նշանաւոր գիտնական, փիլիսոփայ եւ բանաստեղծ Խաչատուր էրզրումցի Առաքելեան: Վենետիկի նշանաւոր եկեղեցիներից Ս. Գէորգը նոյնակէս կապում է վենետիկահայոց պատմութեան հետ: Այն հիմնադրուել է 1608 թուականին: Տաճարը վերանորոգելու ժամանակ՝ 1953-54 թթ. նրա յատակում յայտնաբերուել է հայկական գերեզմանոց: Այստեղ է թաղուած եղել նաեւ 18րդ դարի հայ եկեղեցական նշանաւոր գործիչ, Պոլսի պատրիհարք Գէորգ վարդապետ Ղափանցին:

Վենետիկի Յորի եկեղեցում է պահպանուում հայոց Հեթում Առաջին թագաւորի պատկերը: Կան հայ-վենետիկեան կեանքին առընչուող գրաւոր՝ տպագիր եւ անտիպ բազմատեսակ աշխատովթիւններ: 16րդ դարի նշանաւոր թարգմանիչ հայագիր Խաւատուր Դաւրիթեցին Վենետիկում պարսկերէնից իտալերէնի թարգմանելով «Ուշեւորովթիւն երից որդւոց Սերենդիպոյ արքային» երկը (տպ. 1557ին), առաջարանում կարեւոր մանրամասնովթիւններով ու կենդանի արուեստով նկարագրում է Վենետիկ քաղաքը եւ նրա բարքերը: Յովհաննէս եւ Խաչատուր հայր եւ որդի Տէրզնցիները (16-17րդ դդ.) Վենետիկում հիմնադրում են հայոց նոր տպարան: Խաչատուր Թոփաթցին (1614թ.) «Յարմարեալ պատմովթիւն Վենետիկոյ, փոքր ի շատէ ականատես եւ ոչ ականջալուր լեալ» իր չափածոյ պատմովթեամբ ճանաչում ունի նաեւ իտալական գրականութեան մէջ: Խաչատուր էրզրումցին իր աստուածաբանական եւ յատկապէս գիտա-փիլիսոփայական, տեսական բազմահատոր աշխատովթիւններով եւ գեղարուեստական, ուսուցողական չափածոյ երկերով («Համառուական իմաստափրութիւն կամ բովանդակութիւն ամենայն ուսմանց» եւ այլք) հայերին հաղորդակից է դարձնում եւրոպական նոր գիտովթեան ու արուեստի նուաճումներին: 18րդ դարում Վենետիկում հանդէս է գալիս հայագիր մի այլ նշանաւոր դէմք՝ բանաստեղծ-փիլիսոփայ, երգիծաբան, թարգմանիչ, դրամատուրգ Զաքարիա Շահրիմանեանը (1709-1784 թթ.), որին վիճակուած էր զգալի գեր կտարելու ժամանակի իտալական գրականութեան պատմովթեան մէջ: Զաքարիա Շահրիմանեանը թողել է բազմահատոր երկեր, որոնք տպագրուել են իտալերէն, սպաներէն, անգլե-

րէն եւ այլ լեզուներով։ Զաքարիայի գրական փառքը կազմում է «Հնրիկոյ Վանտոնի ճանապարհորդութիւնը» չորս հատորանոց վէպը, որ ժամանակի իտալական գրաֆննաղատութեան մէջ համարումով է քըննաղատական, բարոյագիտական, երգիծական լաւագոյն ստեղծագործութիւն, որպիսին երբեւ ունեցել է իտալական գրականութիւնը։

Յայտնի է, որ Խորայէլ Օրին իր քաղաքական, ազատասիրական պայքարի իրականացման ճանապարհին գործակցում է նաեւ վենետիկահայ ազատամիտ վաճառականների եւ այլ գործիչների հետ։ Խոկ Ղափանի հերոսական մարտերի մասնակից Ստեփանոս Շահումեանը Վենետիկում, Ս. Ղազարում, Մխիթար Սեբաստացու հայեացքի տակ է շարադրում Դաւիթ Բեկի պատմութիւնը։ Խտալիայում մեծ համբաւ է վայելում նաեւ հայազգի Վիկտորիա Աղանուրը, որն իր քնարական նրբագեղ երգերով երկրորդ Աղա-Նեղրին է ճանաչւում իտալական գրականութեան մէջ եւ այլն։

Ցոյժ հետաքրքրական է վենետիկահայոց երաժշտական կապերի պատմութիւն։ Ս. Մարկոսի տաճարում, Ս. Յուստինիանոսի, Ս. Խաչի, Ս. Ղազարի վանքերում, հնից մինչեւ այսօր, տարբեր առիթներով եկեղեցական եւ ազգային տօների ժամանակ հնչում են հայկական դասական երաժշտութեան ընտիր նմոյշները՝ աղօթքներ, շարականներ, տաղեր եւ այլ երգեր։ Ըստ մասնագէտների, այդ երգերը կատարում են միեւնոյն ճիշտ եւ անփոփոխ եղանակներով։ Հայ երաժշտութեան պատմութեան յիշարժան էջերից մէկը եղաւ 1973 թ. Նոյեմբերի 29ին Վենետիկում ներսէս Շնորհալու մահուան 800ամեակի առիթով կազմակերպուած Հանդիսութիւնը՝ Ս. Յուստինիանոս եկեղեցու սիւնազարդ դաշլիճում։ Վենետիկի երաժշտասէր հասարակութիւնը ծանօթ է ոչ միայն Շնորհալու, այլև եկմալեանի, Կոմիտասի, Արամ Խաչատրեանի եւ այլոց անուններին...։

Վենետիկում ամէն տարի Յուլիսի 17ը համաժողովրդական տօնախմբութեան օր է՝ նույիրուած Ս. Փրկիչ եկեղեցուն։ Դա կապւում է պատմական մի ուշագրաւ երեւոյթի հետ։ 1577 թուականի ամռանը Վենետիկում տարածուած համաճարակին զոհ է գնում բնակչութեան մի զգալի մասը։ Հասարակապետութիւնը ձեռք է առնում ամէն մի միջոց՝ կանխելու ահաւոր համաճարակը, բայց ոչինչ չի օգնում, եւ ահա հայազգի նաւաշշնարար Անտոն Սուրեանը, «Հայ Անտոնը», որի անունը հոչակուած էր ծովասոյզ ուազմանաւերը փրկելու, ծովի յատակը մաքրելու նորատիպ մեքենաների իր գիտերով, ստեղծում է մի արտակարգ դեղամիջոց եւ կանխում 1577 թ. Վենետիկի համաճարակը։ Դրսական պալատի սենատի որոշմամբ պարգեւատրւում է հայազգի փրկարարը, խոկ այդ օրը՝ Յուլիսի 17ը, վենետիկցիների համար ճանաչւում է իրեւ փրկութեան օր, եւ կառուցւում մի նոր տաճար՝ Ս. Փրկիչ տաճարը։

իտալական՝ հին ու նոր արուեստների այս կախարդական աշխարհը, ստեղծագործական մեծ պահեր է չորրեցել նաև համաշխարհային գրականութեան ու արուեստի այլազգի տիտաններին: Այստեղ եղել են՝ ապրել ու գործել՝ Շեքսպիրը, Գոբթեն, Բայրոնը, Ֆլորենը, Ստենդալը, Առամ Միջկեւիչը, Գոգոլը, Զեխովը, Գորկին, Այվազովին, Աղամեանը, Փափազեանը, Իսահակեանը, Զարենցը եւ այլ մեծանուն գործիչներ: Իտալական մի շարք քաղաքներում՝ Հռոմ, Վենետիկ, Ֆլորենցիա, Պարմա, Վերոնա եւ այլք, մատնացոյց են արուու քանդակակերա կոթողներ, սրբավայրեր, պալատներ, հրապարակներ, սրճարաններ, որոնք կապւում են այս երեւելիների անունների հետ: Փոքրաթիւ ազգերի պատմութեան մէջ բացառիկ եւ հետաքրաշարժ երեւոյթ է հայերի հետ Բայրոնի՝ մեզանում լայնօրէն յայտնի առընչութիւնները: 1816 թուականին գալով Խոտալիա, Վենետիկ, անզիացի հանճարեղ բանաստեղծը մի ներքին պահանջով այցելում է Վենետիկի Ս. Ղազար կղզին ու առաջին իսկ օրից կապւում հայ ժողովրդի տարագիր զաւակների հետ, ծանօթանում հայոց զարաւոր, սրտակէզ պատմութեանը, սովորում նրա հնաբոյր լեզուն, գիրն ու գրականութիւնը, խորապէս ճանաչելով սիրում է հայ ժողովրդին ու գնահատում նրա բացառիկ գերը մարդկային ազգի պատմութեան մէջ: «Եթի 1816 թուականին Վենետիկի հասայ, - գրում է Բայրոնը, - ես եւս ա'լ նանապարհորդների նման մեծապէս հետաքրիւում էի նաևաչելու Ս. Ղազարի միաբանութեանը...»: «Նրանք քահանաներ են մի թնջուած ազգի, - շարունակում է Բայրոնը, - որ իրեաների եւ յոյների պէս գերի մնացած կամ տարագրուած էր: Այս ժողովուրդը հարստացաւ առանց կեղեկելու եւ արժանի դարձաւ ժողովուրդը ու պատուի, որ կարելի է ունենալ սորդութեան մէջ՝ տանց վեստների ու պատուի, որ կարելի է ունենալ սորդութեան մէջ՝ տախարէութեան...»: «Թերեւս գոյութիւն չութին ժողովուրդների տարբարութիւններ, որոնք այլքան շատ բռնաւորուած լինեն ոնիրներով, որքան հայոց տարբարութիւնները, - գրել է նա, - որովհետեւ լով, որքան հայոց տարբարութիւնները, - գրել է նա, - որովհետեւ լիրնեց առաքինութիւնը խաղաղութեան համար տածած սէրն է, մինչիրենց առաքինութիւնը խաղաղութեան համար տիրապետութիւններ իրենց բռնութիւնները գալիս են օտար տիրապետութիւններից եւ բռնակալներից... այսուհետեր հակառակ իրենց տիրուանցեալին, անստոյգ պապային, իրենց երկիրը միշտ, բռնոր ժամանակների համար պիտի մնայ աշխարհիս ամէնից հետաքրիւականը եւ իրենց լեզուն աւելի երապուրիչ: Պարսիկները եւ քուրքերը աւերեցին այս երկիրը, ուր Աստուած ստեղծել էր մարդը ըստ պատկերի իրում»:

Վենետիկայոց կեանքի, Ս. Ղազարի Միհիթարեան Միաբանութեան պատմութեան հետ է կապւում նաև Բայրոնի ստեղծագործական կեանքի բազմաթիւ էջեր: Հանճարեղ բանաստեղծը իր «Զայլդ Հարոլդ»ի չորրորդ երկը, եւ «Մանֆրեդը»ը գրել է Վենետիկում, Ս. Ղազարում՝ Միհիթարեան Հայրերի մօտ, բայրոննան ձիթենիների չուքի տակ:

Զարմանալի ու իւրօրինակ մի ներքին համախօսութեան...: Նոյն դարում բոլորովին այլ պարագաներում, Հայրենիքի նկատմամբ ունեցած բայրոննեան նոյնանուն սէրը, նոյն անհուն կարօտն ու ազատութեան բաղձանքն են այրում, փոթորկում հայ ազգային մեծ բանաստեղծ Միքայէլ Նալբանդեանի հոգին: Նա էլ, իսանդավառուած աւստրիական լծի դէմ իտալական ժողովրդի մղած ազատազրական պայքարի կոչով, արտայայտում է իր հայրենիքի քաղաքական ազատութեան բաղձանքը եւ գրում է «Խտալացի աղջկայ երգը» սքանչելի բանաստեղծութիւնը, որը հրապարակ գալու առաջին օրերից (1861թ.) երգուում է ամէնուր, ամէն տեղ՝ իբրև հայ ժողովրդի ազգային քայլերգ:

Վենետիկն ունի նաեւ Ա. Իսահակեանի եւ Եղիշէ Զարենցի կեանքի հետ կապուած քաղցր յիշողութիւններ: Բազմիցս հրապարակուել է մեր այս մեծերի լուսանկարը Ս. Մարկոսի տաճարի հրապարակում (1926թ.) մտերմիկ զրոյցի պահին, աղաւնիներ կերակրելիս: Այստեղ երկու հանճարներն ապրել են ստեղծագործական սքանչացումի բացառիկ պահին: Մեծ Վարպետը Վենետիկում եւ Պոմպէյում գրել է խոհափիլսոփայական հայրենաբաղձ, սիրոյ եւ կարօտի բանաստեղծութիւնների մի ամբողջ շարք:

Զարենցը Վենետիկում է երկնել Իսահակեանին նուիրած իր հանրայայտ «Էլեգիան»՝ օտարութեան մէջ վշտահարուած երգչին՝ հայրենիք վերադարձնելու ներքին անթաքուն խորհրդով:

Ուրախութեամբ պէտք է յիշատակել, որ վերջին տարիների ընթացքում, հայ-իտալական մշակութային կապերն ուժեղանում են: Միիթարեան Միաբանութեան վաստակաշատ հայագէտներ, մանկավարժներ, հրատարակիչներ՝ շարունակում են կենսագործել իրենց առաջնորդի՝ լուսանորոգն Միիթարի պատգամները եւ առաջ են մղում հայագիտութիւնը, հայ դպրոցական, կրթական, լոյսաւորական շարժումը իտալիայում եւ սիիւլորում: Հայ-իտալական բարեկամութեան կապն ու համագործակցութիւնը հարստանում է նորանոր մնայուն գործերով: Հայ եւ իտալացի գիտականները, արուեստագէտները, պատմաբանները՝ արմատաւորում են հայագիտութիւնը իտալական համալսարանների համապատասխան ամբիոններում: Այժմ Միլանում գործում է «Խտալահայ մշակութային միութիւնը», Միլանի պոլիտեխնիկական ինստիտուտում գործում է հայկական միջնադարի հնութիւնների ուսումնամսիրութեան կենտրոնը: 1968 թուին հիմնուած է «Հայ ճարտարապետութեան վաւերագրեր» մատենաշարը: Հայ եւ իտալացի արուեստագէտների ջանքերով կազմակերպում են պարբերական գիտաժողովներ իտալիայում եւ Հայաստանում:

Հայ-իտալական հնագոյն, դարերի պատմութիւնը նորոգւում, հարստանում էր, երբ վրայ հասաւ 1988 թ. Դեկտեմբեր 7ի հայոց անօրինակ աղէտը:

**Պատմութիւնը ըստ արժանույն կը գնահատուի հայոց երկնային պատուհասի օրերին, ողջ աշխարհի ժողովուրդների, այս դէպում յատկապէս իտալացիների ցուցաբերած անչափելի կարեկցանքն ու մարդասիրութիւնը։ Սպիտակի իտալական աւանը դարձաւ հայ եւ իտալացի ժողովրդների հինաւուրց բարեկամութեան նոր խորհրդանիշ։**

**Այսպէս ուրեմն։ Հայ իտալական յարաբերութիւնների հարուստ եւ հետաքրքրական պատմութիւնը, որ ընդգրկում է շուրջ 15 դար, սպասում է գիտական, քննական, համակողմանի ուսումնասիրութեան։ Միայն Միկրարեան Միարանութեան, Վենետիկի Ս. Ղազարի հայոց գրական, կրթական, լուսաւորական եռադարեան կեանքի շուրջ պէտք է ստեղծուեն հատորներ, որոնք կը ներկայանան նաեւ աշխարհասփիւռ հայութեան եւ մայր հայրենիքի ընդհանուր կեանքի պատմութեանը։ Վերջերս միայն մեզ յայտնի դարձաւ պատմական գիտութիւնների թեկնածու Հրաչեայ Ասմարեանի հայ-իտալական 19-20րդ դարերի պատմութեանը վերաբերող՝ «իտալական ազատագրական շարժումները հայ հասարակական մտքի գնահատութեամբ» աշխատութիւնը։**

**ՇՈՒՇԱՆԻԿ ՆԱԶԱՐԵԱՆ**